ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿԱՊԱՆԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐԸ «ՍՅՈՒՆԻՔ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ութը սեպտեմբերի 2017 թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանը (այսուհետ՝ Կոնցեդենտ), ի դեմս Կապան համայնքի ղեկավար Ա.Հայրապետյանի, որը գործում է համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 23-ի թիվ 69-Ա որոշման հիման վրա, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐԳԱՄ ԼԵՆՏՐՈՒՇԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ծնված՝ 01.07.1963 թվականին, նույնականացման քարտ՝ 001962208 տրված 041-ի կողմից 13.04.2015 թվականին, ՀԾՀ՝ 110763004, հաշվառված՝ քաղաք Կապան, Հ. Ավետիսյան 8 շենք, բն. 2, և և «Սյունիք օդանավակայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, գրանցման համար՝ 72.110.958769, ՀՎՀՀ՝ 09425652, գտնվելու վայրը՝ ք. Կապան, Հ. Ավետիսյան փող. շ. 22 Ա, (այսուհետ՝ Կոնցեսիոներ), գրանցված, ի դեմս տնօրեն ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ծնված 23.10.1984 թվականին, անձնագիր՝ AP0681443 տրված 001-ի կողմից 19.01.2017 թվականին, հաշվառված՝ քաղաք Երևան, Ֆուչիկի 1-ին նրբանցք, շենք 3, բն. 28 հասցեում, (այսուհետ՝ Կողմեր, առանձին՝ Կողմ) կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ՄԱՍ 1
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 1. Սահմանումներ

Սույն պայմանագրում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

Պայմանագիր՝ սույն պայմանագիրն իր հավելվածներով

Կիրառվող օրենսդրություն Հայաստանի Հանրապետության գործող օրենքները և այլ իրավական ակտերը

Աշխատանքային օր՝ ցանկացած օր, բացի Կիրառվող օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրերից

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ սույն Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման օրը

Կոնցեսիոն գործունեության մեկնարկի ամսաթիվ՝ Կոնցեսիոների կողմից կոնցեսիոն գործունեություն սկսելու օրը

Կոնցեսիոն ակտիվներ՝ օդային տրանսպորտի օբյեկտներ, սույն Պայմանագրին համապատասխան կոնցեսիոներին փոխանցված անշարժ և շարժական գույք

Կոնցեսիոն գործունեություն՝

ա) Կոնցեսիոն ակտիվների օգտագործումը, կառավարումը, շահագործումը, սպասարկումը և բարելավումը

բ) Կապանի օդանավակայանի շահագործումը՝ ապահովելով ուղևորներին անվտանգ, որակյալ և անխափան ծառայությունների մատուցումը

Վեճ՝ ցանկացած տարաձայնություն, որը կողմերի միջև առաջանում է սույն Պայմանագրի շրջանակներում, բացառությամբ լիցենզիայի հետ կապված վեճերի, որոնք կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

Օդանավակայան՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի օդանավակայան, հասցե՝ Սյունիքի մարզ, Կապան քաղաք, գյուղ Սյունիք, Գաղթական թաղամաս 70, հողամասիծածկագիր՝ 09-082-0553-0004,

Օդանավակայանի շահագործում՝ Կոնցենսիոն ակտիվների տեխնիկական ու առևտրային շահագործումը

Օդանավակայանային ծառայություններ՝ այն բոլոր ծառայությունները որոնք անհրաժեշտ են անխափան շահագործելու համար շինությունների համալիրը, որը ներառում է աերոդրոմը, ուղևորների, բեռների և փոստի սպասարկման համար նախատեսված շինությունները և այլ շինություններ, որոնք նախատեսված են օդանավերի ընդունման, ուղարկման, օդային փոխադրումների սպասարկման նպատակներով և համալրված են համապատասխան սարքավորումներով ու սպասարկող անձնակազմով:

Մ Ա Ս 2
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 2-1. Կոնցեսիոն պայմանագրի առարկան

1. Կոնցեդենտը պարտավորվում է սույն Պայմանագրին համապատասխան Կոնցեսիոներին փոխանցել Կոնցեսիոն ակտիվների տիրապետման, օգտագործման, կառավարման, շահագործման, սպասարկման, վերանորոգման և անհրաժեշտ բարելավման իրականացման իրավունքը, որոնց սեփականատերն է հանդիսանում Կոնցեդենտը, իսկ Կոնցեսիոները պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով իրականացնել Կոնցեսիոն ակտիվների տիրապետումը, օգտագործումը, կառավարումը, շահագործումը, սպասարկումը, վերանորոգումը և անհրաժեշտ բարելավումը:

2. Սույն Պայմանագրին համապատասխան Կոնցեսիոն ակտիվները Կոնցեդենտը Կոնցեսիոներին է փոխանցում հանձնման-ընդունման ակտին համապատասխան:

3. Կոնցեդենտի կողմից Կոնցեսիոն ակտիվները Կոնցեսիոներին փոխանցելու պարտավորությունը համարվում է կատարված Կոնցեսիոների կողմից դրանք ընդունելու և հանձնման- ընդունման ակտը Կողմերի ստորագրելուց հետո:

4. Հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց Կողմերից որևէ մեկի չհիմնավորված հրաժարումը համարվում է սույն Պայմանագրի խախտում:

5. Կոնցեդենտը Կոնցեսիոներին է փոխանցում Կոնսեցիոն ակտիվներին վերաբերող փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագրի կատարման համար, Կոնցեսիոն ակտիվները փոխանցելու մասին հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահին:

6. Կոնցեսիոն ակտիվների մեջ ներառվող պետական գրանցում պահանջող գույքի նկատմամբ Կոնցեսիոների գույքային իրավունքները ծագում են դրանց՝ Կիրառվող օրենսդրությանը համապատասխան պետական գրանցման պահից:

7. Կոնցեսիոն ակտիվների նկատմամբ Կոնցեսիոների գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքներն իրականացվում են Կոնցեսիոների հաշվին:

8. Կոնցեսիոները պարտավոր է Կոնցեսիոն ակտիվները հաշվառել իր հաշվեկշռում և իրականացնել ամորտիզացիոն հատկացումներ անշարժ գույքի պետական գրանցման պահից:

9. Կոնցեսիոն ակտիվների պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը կրում է Կոնցեսիոները, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհաղթահարելի ուժի կամ կոնցեսիոներից անկախ հանգամանքների հետևանք է:

10. Սույն Պայմանագրի պայմանների կատարումն ապահովելու նպատակով Կոնցեսիոները պարտավորվում է Պայմանագիրն իրավաբանական ուժ ստանալուց 2 (երկու) ամսվա ընթացքում Կոնցեդենտին ներկայացնել իր կողմից իրականացվելիք ներդրումային ծրագիրը, որը, Կոնցեդենտի կողմից հավանության արժանանալուց հետո վավերացվում է Կողմերի միջև կնքվող և սույն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ համաձայնագրով:

Հոդված 2-2 Օդանավակայանային ծառայությունների մատուցում

Կոնցեսիոները պարտավորվում է իրականացնել օդանավակայանի շահագործումը քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների պահանջներին և Կիրառվող օրենսդրությանն համապատասխան:

Հոդված 2-3. Կոնցեսիոների կողմից իրականացվող կոնցեսիոն գործունեությունը՝ իր հաշվին և իր պատասխանատվությամբ

1. Կոնցեսիոները սույնով ընդունում է և համաձայնվում, որ իրականացրել է Կոնցեսիոն գործունեության պատշաճ համապատասխանության ուսումնասիրություն, այդ թվում Կոնցեսիոն ակտիվների և Կոնցեդենտի կողմից տրամադրված ցանկացած տեխնիկական և ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ, և ելնելով նման ուսումնասիրություններից՝ արդեն օգտվել է իր ունեցած բոլոր իրավունքներից ու միջոցներից, և անվերապահորեն համաձայնվում է իրականացնել Կոնցեսիոն գործունեությունը սույն Պայմանագրի կնքման պահի դրությամբ առկա վիճակում:

2. Կոնցեսիոները պարտավոր է իրականացնել սույն Պայմանագրի 2-2 հոդվածով նախատեսված ծառայություններ:

Հոդված 2-4. Կոնցեսիոների կողմից անհրաժեշտ համաձայնությունների և թույլտվությունների ձեռքբերում

1. Կոնցեսիոները պարտավոր է ժամանակին, իր հաշվին և իր պատասխանատվությամբ իրականացնել Կիրառվող օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները՝ ձեռք բերել սերտիֆիկատներ, հավանություններ, համաձայնություններ և թույլտվություններ, ինչպես նաև իրականացնել իր գույքային իրավունքների պետական գրանցումը:

2. Կոնցեդենտը, անհրաժեշտության դեպքում, իր իրավասությունների սահմաններում, աջակցում է Կոնցեսիոներին ցանկացած պահանջվող լիազորագրերի, հավանությունների և թույլտվությունների ձեռք բերման հարցում: Նման աջակցության ընթացքում Կոնցեդենտի կողմից կրած ցանկացած ուղղակի հիմնավորված ծախսերը, ենթակա են անհապաղ փոխհատուցման Կոնցեսիոների կողմից:

Հոդված 2-5. Անխափան տիրապետման և օգտագործման երաշխիք

1. Կոնցեդենտը երաշխավորում է՝

ա) տրամադրել Կոնցեսիոներին տիրապետման և օգտագործման իրավունք Կոնցեսիոն ակտիվների նկատմամբ կոնցեսիոն գործունեության ամբողջ ժամկետի ընթացքում:

բ) Կոնցեսիոն ակտիվները հանդիսանում են Կոնցեդենտի սեփականությունը և զերծ են որևէ պարտավորությունից կամ երրորդ անձանց իրավունքներից;

գ) Կոնցեդենտը որևէ գործողություն չի կատարի սույն Պայմանագրով Կոնցեսիոն ակտիվների նկատմամբ Կոնցեսիոների իրավունքներին ի վնաս, բացառությամբ Պայմանագրով կամ Կիրառվող օրենսդրությամբ հստակորեն թույլատրված դեպքերի:

2. Կոնցենդենտի կողմից սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված երաշխիքի ցանկացած խախտում կհամարվի հատուկ դեպք:

3. Կոնցեդենտը կկանխի ընդդեմ Կոնցեսիոների երրորդ անձանց կողմից ցանկացած հնարավոր գործողություն՝ ուղղված Կոնցեսիոն ակտիվների նկատմամբ Կոնցեդենտի սեփականության իրավունքի և Կոնցեսիոներին Կոնցեսիոն ակտիվների փոխանցման վիճարկմանը:

Հոդված 2-6. Օդանավակայանային օբյեկտների կառուցում և վերակառուցում

1. Կոնցեսիոներն իրավունք ունի Կիրառվող օրենսդրությանը համապատասխան, նախապես համաձայնեցնելով Կոնցեդենտի հետ, կառուցել և վերակառուցել օդանավակայանային օբյեկտներ՝ ներառյալ Կոնցեսիոն ակտիվները, բացառությամբ այն

շինարարական աշխատանքների, որոնց համար Կիրառվող օրենսդրությամբ նման համաձայնեցում նախատեսված չէ:

2. Կոնցեսիոները իր կողմից օդանավակայանային օբյեկտների կառուցման և /կամ վերակառուցման դեպքում առաջնորդվում է Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված կարգով:

3. Կոնցեսիոներն իրավասու է ներգրավել երրորդ անձանց օդանավակայանային օբյեկտների կառուցման և վերակառուցման համար, որոնց կողմից իրականացվող բոլոր գործողությունների համար կրում է պատասխանատվություն:

4. Կոնցեսիոները պատասխանատու է օդանավակայանային օբյեկտների կառուցման և վերակառուցման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի պատրաստման և բոլոր անհրաժեշտ թույլտվությունների ձեռք բերման համար, ինչպես պահանջվում է Կիրառվող օրենսդրությամբ:

5. Օդանավակայանային օբյեկտների կառուցման և վերակառուցման նախագծային փաստաթղթերում Կիրառվող օրենսդրության պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում Կոնցեսիոները պետք է անմիջապես հայտնի այդ մասին Կոնցեդենտին և դադարեցնի կառուցման/վերակառուցման աշխատանքները՝ մինչև նախագծային փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարվեն: Այս դեպքում նախագծային փաստաթղթերում փոփոխությունները կատարվում են Կոնցեսիոների հաշվին:

6. Այն դեպքում, եթե Կոնցեսիոները հայտնաբերում է, որ օդանավակայանային օբյեկտների կառուցումը, վերակառուցումը և շահագործման հանձնումը նախատեսված ժամկետներում անհնար է, ապա Կոնցեսիոները պետք է անմիջապես ծանուցի Կոնցեդենտին՝ վերջինիս կողմից տրամադրված շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար:

7. Կոնցեսիոների կողմից օդանավակայանային օբյեկտների կառուցման, վերակառուցման աշխատանքների ավարտը ձևակերպվում է քաղաքաշինական Կիրառվող օրենսդրության համաձայն:

8. Սույն Պայմանագրի համաձայն Կոնցեսիոների պարտավորությունների կատարման հետ կապված ծախսերը՝ ներառյալ օդանավակայանային օբյեկտների կառուցման և վերակառուցման ծախսերը, կրում է Կոնցեսիոները:

ՄԱՍ 3
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԿՈՆՑԵՍԻՈՆ ԺԱՄԿԵՏ

Հոդված 3-1. Պայմանագրի ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում սույն Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

Հոդված 3-2. Սույն Պայմանագրի գործողության ժամկետ և լուծման ամսաթիվ

Սույն Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է քսանհինգ (25) տարի՝ սկսած Կոնցեսիոն գործունեության մեկնարկի ամսաթվից: Սույն Պայմանագրի լուծումը տեղի կունենա Կոնցեսիոն գործունեության մեկնարկի ամսաթվի քսանհինգերորդ (25-րդ) տարեդարձին հաջորդող օրը, եթե դրա ժամկետը չի երկարացվել սույն Պայմանագրի 3-3 հոդվածի դրույթներին համաձայն:

Հոդված 3-3. Սույն Պայմանագրի գործողության ժամկետի երկարացում

1. Սույն Պայմանագրի 3-2 հոդվածով նախատեսված քսանհինգ (25) տարվա գործողության ժամկետը կարող է երկարացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ լրացուցիչ տաս (10) տարով՝ Կողմերի միջև համաձայնեցված նոր պայմաններով:

2. Կոնցեսիոները պետք է ծանուցի Կոնցեդենտին կամ Կոնցեդենտը պետք է ծանուցի Կոնցեսիոներին, սույն Պայմանագրի գործողության ժամկետը երկարացնելու իր մտադրության մասին ոչ ուշ, քան Կոնցեսիոն գործունեության մեկնարկի ամսաթվի քսաներորդ (20-րդ) տարեդարձից վեց (6) ամիս առաջ:

3. Եթե սույն Պայմանագրի քսանհինգ (25) տարվա գործողության ժամկետը երկարացվում է լրացուցիչ տաս (10) տարով սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, ապա նոր լուծման ամսաթիվ է սահմանվում Կոնցեսիոն գործունեության մեկնարկի ամսաթվի եռասունհինգերորդ (35-րդ) տարեդարձին հաջորդող օրը:

ՄԱՍ 4
ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Հոդված 4-1. Կոնցեսիոների հիմնական պարտավորությունները և աշխատանքային չափանիշները

Կոնցեսիոները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած և կոնցեսիոն ժամկետի ամբողջ ընթացքում, պարտավոր է՝

ա) իրականացնել օդանավակայանի շահագործումը Կիրառվող օրենսդրությանը համապատասխան:

բ) մատուցել պատշաճ որակի ծառայություններ ուղևորներին՝ Կիրառվող օրենսդրությանը համապատասխան և ջանալ որպեսզի այդ ծառայությունները մատուցվեն արդյունավետ և ժամանակին;

գ) իրագործել սույն Պայմանագրով նախատեսված շահագործման և ներդրումային ծրագրերը:

դ) ապահովել օդանավակայանի, թռիչքուղու, թռիչքադաշտի և աէրոդրոմի բոլոր բաղկացուցիչ մասերի աշխատանքային վիճակը:

ե) ապահովել սույն Պայմանագրով Կոնցեսիոների ստանձնած պարտավորությունների կատարման և ներդրումային ծրագրերով սահմանված ժամանակացույցի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Կոնցեդենտի կողմից պահանջված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումը վերջինիս

Հոդված 4-2. Կոնցեսիոների գործունեության ազատությունը

Կոնցեսիոներն իրավունք ունի իրականացնելու Կիրառվող օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձեռնարկատիրական կամ տնտեսական գործունեություն:

Հոդված 4-3. Առևտրային հիմունքներով գործունեություն իրականացնելու ազատություն

Սույն Պայմանագրին և Կիրառվող օրենսդրությանը համապատասխան Կոնցեսիոներն ազատ է որոշելու իր գործունեության բնույթը, հիմքը, տեխնիկական և առևտրային կողմերը, այդ թվում՝ աշխատուժի գծով այն պահանջները, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագրի 4-1 հոդվածով իր պարտավորություններն իրականացնելու համար:

Հոդված 4-4. Օդանավակայանային ծառայությունների սակագները

Կոնցեսիոներն ազատ է սահմանելու սակագներ օդանավակայանային ծառայությունների համար, այդ թվում օդանավակայանի տարածքում ցանկացած առևտրային գործունեության թույլտվություն տրամադրելու համար՝ Կիրառվող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հոդված 4-5. Ուղղակի կառավարելու և կոնցեսիոն գործունեություն իրականացնելու Կոնցեդենտի իրավունքը

1. Առանց սահմանափակելու Կողմերի այլ իրավունքները սույն Պայմանագրի ներքո, բացի Կոնցեսիոների վրա ազդող անհաղթահարելի ուժի առկայության հանգամանքներից, Կոնցեդենտը իրավունք ունի մտցնել ուղղակի կառավարում և իրականացնել կոնցեսիոն գործունեություն Կոնցեսիոների փոխարեն, եթե վերջինս դադարեցնում է մատուցել օդանավակայանային ծառայություններ տասնհինգ (15) իրար հաջորդող օրվա ընթացքում և որևէ էական առումով չի հետևում Կիրառվող օրենսդրության կամ սույն Պայմանագրի դրույթներին, որոնք պահանջում են անվտանգ օդանավակայանային ծառայությունների մատուցում նույն ժամանակահատվածում:

2. Եթե Կոնցեդենտը որոշում է օգտվել սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված իր իրավունքներից, նա իրավասու է, քսանչորս (24) ժամ առաջ ծանուցելով Կոնցեսիոներին, հսկողություն սահմանել Կոնցեսիոն ակտիվների նկատմամբ, ուղղակիորեն և/կամ երրորդ անձանց միջոցով իրականացնել օդանավակայանի շահագործումը և մատուցել օդանավակայանային ծառայություններ:

3. Եթե Կոնցեդենտը կիրառում է սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված իր իրավունքը, վերջինս Կոնցեսիոների հետ համատեղ, հնարավոր սեղմ ժամկետներում բանակցում է ուղղակի կառավարման իրավունքի իրականացման ավարտման առանձնահատկությունների և այն ժամկետների և պայմանների վերաբերյալ, որոնցով Կոնցեսիոներն իրավասու կլինի վերսկսելու կոնցեսիոն գործունեությունը: Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքները դադարում են մինչև ուղղակի կառավարման համաձայնեցված ժամկետը, Կոնցեդենտը պետք է անմիջապես դադարի կիրառել ուղղակի կառավարման իր իրավունքը, և սույն Պայմանագրով Կոնցեսիոներին վերապահված բոլոր իրավունքները և պարտականությունները պետք է վերականգնվեն:

4. Եթե կողմերը այլ բան չեն պայմանավորվել, Կոնցեդենտը պարտավոր է ուղղակի կառավարման ընթացքում ապահովել Կոնցեսիոն ակտիվները օգտագործողներից վարձավճարների և վճարների հավաքագրումը նույն կերպ և նույն բարեխղճությամբ, որոնք իրականացրել է Կոնցեսիոները: Կոնցեդենտը պարտավոր է ուղղակի կառավարումը դադարելու օրվանից տասը (10) աշխատանքային օրվա ընթացքում այդպիսի վճարումները լրիվ ծավալով անհատույց փոխանցել Կոնցեսիոների հաշվին, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետում նշված կառավարման ընթացքում իրականացրած անհրաժեշտ ծախսերի:

5. Եթե Կոնցեդենտը անհիմն կերպով օգտվել է ուղղակի կառավարման իր իրավունքից, Կոնցեդենտը պարտավոր է Կոնցեսիոներին փոխհատուցել իր գործողությունների հետևանքով պատճառած վնասները և կորուստները:

ՄԱՍ 5
ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հոդված 5-1. Անշարժ գույքի սեփականություն

1. Կոնցեդենտը հանդիսանում է Կոնցեսիոն ակտիվների սեփականատերը:

2. Կոնցեսիոների կողմից կառուցվող օդանավակայանային շինությունները Պայմանագրի գործողության ժամանակահատվածում գրանցվում են որպես Կոնցեսիոների գույք, իսկ Պայմանագրի ավարտից հետո դառնում են Կոնցեդենտի սեփականություն:

3. Օդանավակայանի աշխատակիցների աշխատանքների համար ձեռք բերված գույքը (գրասենյակային կահույք, տեխնիկա, ավտոմեքենա, այլ շարժական գույք) հանդիսանում է Կոնցեսիոների սեփականությունը

Հոդված 5-2. Սպասարկման, վերանորոգման ու անհրաժեշտ բարելավման աշխատանքներ

Կոնցեսիոները պարտավոր է իր հաշվին իրականացնել Կոնցեսիոն ակտիվների սպասարկման, վերանորոգման և անհրաժեշտ բարելավման աշխատանքներ՝ պահպանելով Կիրառվող օրենսդրության պահանջները:

Հոդված 5-3. Կոնցեսիոն ակտիվների վերադարձը բարվոք վիճակում

1. Պայմանագրի լուծման ամսաթվին Կոնցեսիոները Կոնցեդենտին պետք է վերադարձնի Կոնցեսիոն ակտիվներն այնպիսի վիճակում, որպեսզի հնարավոր լինի օդանավակայանի շահագործումը շարունակել առանց դադարի առնվազն երեք (3) տարվա ընթացքում՝ առանց այլ ներդրումների, բացի ընթացիկ սպասարկումից: Սույն Պայմանագրի լուծման ամսաթվից հարյուրութսուն (180) օր առաջ Կոնցեսիոները պետք է Կոնցեդենտին ներկայացնի Կոնցեսիոն ակտիվների ցանկը, որոնք նա դեռ օգտագործում է, որտեղ պետք է առնվազն ընդգրկվեն տեղեկություններ դրանց գտնվելու վայրի և վիճակի վերաբերյալ:

2. Եթե Կոնցեդենտը պատշաճ հիմնավորմամբ գտնում է, որ Կոնցեսիոն ակտիվները վերադարձվել են այնպիսի վիճակում, որը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմաններին, Կոնցեսիոները պարտավոր է իր հաշվին իրականացնել Կոնցեդենտի կողմից պահանջված անհրաժեշտ վերանորոգումները և վերակառուցումները:

3. Կոնցեսիոն ակտիվների վերադարձի հետ առընչվող ծախսերը, այդ թվում սույն Պայմանագրի գործողության ընթացքում Կոնցեսիոների կողմից կառուցված անշարժ գույքը Կոնցեդենտի անվամբ պետական գրանցում կատարելու ծախսերը և վճարները պետք է կրի Կոնցեսիոները:

Հոդված 5-4. Կոնցեսիոների կողմից այլ անշարժ գույքի ձեռքբերումը

Կոնցեսիոների կողմից այլ անշարժ գույքի ձեռքբերումը ենթակա չէ կարգավորման սույն Պայմանագրով: Նշված ձեռքբերման հետ կապված ցանկացած պայմանագիր անկախ է սույն Պայմանագրից:

Մ Ա Ս 6
ԿՈՆՑԵՍԻՈՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ

Հոդված 6-1. Կոնցեսիոն ակտիվների վարձակալություն (օգտագործում)

Կոնցեսիոները իրավունք ունի իր հայեցողությամբ Կոնցեսիոն ակտիվները վարձակալության կամ օգտագործման իրավունքով տրամադրել երրորդ անձի, այդ մասին նախապես՝ առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Կոնցեդենտին:

Մ Ա Ս 7
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հոդված 7-1. Կոնցեդենտի կողմից իրականացվող վերահսկողություն

1. Սույն Պայմանագրի գործողության ընթացքում Կոնցեդենտի ներկայացուցիչները կարող են ոչ ավելի հաճախ, քան տարեկան մեկ անգամ, իրականացնել Կոնսեցիոների մոտ ուսումնասիրություններ՝ տեղեկանալու նրա կողմից սույն Պայմանագրի պայմանների և Կիրառվող օրենսդրության պահանջների կատարման ընթացքի վերաբերյալ՝ ներառյալ Կոնցեսիոն ակտիվների դիտարկումը, անհրաժեշտ փաստաթղթերի և ցուցանիշների ուսումնասիրությունը՝ առնվազն 15 (տասնհինգ) աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնելով Կոնցեսիոներին այդ մասին:

2. Կոնցեսիոները պարտավոր է չխոչընդոտել Կոնցեդենտի ներկայացուցիչների գործողություններին՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված աշխատանքների իրականացման ընթացքում:

Հոդված 7-2. Կոնցեսիոների պարտականությունը

1. Կոնցեսիոները պարտավոր է՝

ա) Կոնցեդենտի պահանջով նրան տրամադրել սույն Պայմանագրի պայմանների կատարմանը վերաբերող ցանկացած փաստաթուղթ, այդ թվում նաև անկախ աուդիտի արդյունքում կազմված փաստաթղթերը:

բ) նախապես ստանալ Կոնցեդենտի գրավոր համաձայնությունը Կոնցեսիոների հիմնադիրների և/կամ բաժնետերերի փոփոխության համար:

2. Պատշաճ կերպով և ժամանակին կատարել սույն Պայմանագրի 2-րդ մասով նախատեսված և Կողմերի կողմից լրացուցիչ համաձայնագրով հաստատված ներդրումային ծրագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

3. Յուրաքանչյուր տարվա ընթացքում Կոնցեսիոների կողմից սույն Պայմանագրով նախատեսված ներդրումային ծրագրի դրույթների իրականացման վերաբերյալ մանրամասն և ամբողջական տեղեկատվությունը Կոնցեսիոները պետք է ներկայացնի Կոնցեդենտին՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 31-ը:

Հոդված 7-3. Կոնցեդենտի պարտավորությունները

Կոնցեդենտը պարտավոր է.

ա) չմիջամտել Կոնցեսիոների առևտրային գործունեությանը

բ) չհրապարակել Կոնցեսիոների համար առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, որոնց մասին Կոնցեսիոները գրավոր տեղեկացրել է Կոնցեդենտին՝ այդպիսի տեղեկությունները վերջինիս փոխանցելու ընթացքում:

Հոդված 7-4. Տեղեկատվության փոխանակում

1. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, որոնք կարող են անբարենպաստ անդրադառնալ Կողմերի պայմանագրային պարտավորությունների կատարման վրա:

2. Կողմը, ստանալով սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությունը, պարտավոր է տեղեկատվության ստացման պահից 10-օրյա ժամկետում մյուս Կողմին ներկայացնել գրավոր պատասխան ստացված տեղեկատվության հետ իր համաձայնության կամ անհամաձայնության մասին:

Մ Ա Ս 8
ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Հոդված 8-1. Ընդհանուր սկզբունքներ

Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտման համար, որքանով որ դրանց իրականացմանը խոչընդոտել են անհաղթահարելի ուժի (ֆորս մաժորային) հանգամանքները, որոնք դուրս են անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմի հսկողությունից:

Հոդված 8-2. Սահմանում

1. «Անհաղթահարելի ուժ» արտահայտությունն ընդգրկում է, առանց սահմանափակվելու, հետևյալ իրադարձություններից կամ պայմաններից որևէ մեկը, պայմանով, որ անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմը չի կարողացել կանխել, հաղթահարել կամ կարգավորել այդ իրադարձությունը կամ իրավիճակը ամբողջապես կամ մասամբ՝ կիրառելով պատշաճ միջոցներ.

ա) անկանխատեսելի բնական երևույթներ, այդ թվում՝ կայծակ, հրդեհ, երկրաշարժ, ջրհեղեղ, բուք, ձնամրրիկ, փոթորիկ և այլ արտառոց եղանակային պայմաններ

բ) պայթյուններ, ճառագայթային և քիմիական աղտոտումներ

գ) օտարերկյա թշնամու հետ որևէ ռազմական գործողություն (հայտարարված կամ չհայտարարված), ներքին խռովություն և զինված ընդհարումներ, ահաբեկչական գործողություններ, արտաքին շրջափակում և էմբարգո

դ) աբստամբություններ և քաղաքական խռովություններ, գործադուլներ կամ աշխատավորական շարժումներ Կոնցեսիոների աշխատողների կողմից;

ե) Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության հայտարարում:

2. Եթե անհաղթահարելի ուժի որևէ իրադարձություն կորակավորվի միևնույն ժամանակ որպես հատուկ դեպք, կկիրառվի հատուկ դեպքի ռեժիմ:

Հոդված 8-3. Ծանուցման պարտավորություններ

Եթե անհաղթահարելի ուժ ներկայացնող հանգամանքի պատճառով որևէ կողմ ի վիճակի չէ կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, ապա տվյալ Կողմը պարտավոր է.

ա) անհաղթահարելի ուժի հանգամանքների վերաբերյալ տեղեկանալուն պես մյուս Կողմին ծանուցում ներկայացնել

բ) անհաղթահարելի ուժի հանգամանքների վերաբերյալ մյուս Կողմին առաջին ծանուցումը ուղարկելուց ոչ ուշ քան քսանչորս (24) ժամ անց, ներկայացնել երկրորդ ծանուցում՝ չափավոր մանրամասնությամբ նկարագրելով անհաղթահարելի ուժի հանգամանքը և, որքանով հնարավոր է պարզել երկրորդ ծանուցման պահին, նախնական գնահատում ներկայացնել՝ ազդեցություն կրած պարտավորությունների վերաբերյալ և նախնական կանխատեսում անել, թե որքան ժամանակ տվյալ կողմը հնարավորություն չի ունենա կատարել իր պարտավորությունները:

Հոդված 8-4. Անհաղթահարելի ուժի ավարտ

Անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված Կողմը պարտավոր է մյուս Կողմին հնարավորին չափ սեղմ ժամկետում ծանուցում ներկայացնել նաև հետևյալի մասին.

ա) անհաղթահարելի ուժի ազդեցության ավարտը՝ երկարատև անհաղթահարելի ուժի հանգամանքների դեպքում

բ) անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված Կողմի՝ իր պարտավորություններն վերսկսելու հնարավորությունը:

Հոդված 8-5 Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմացում

Կողմերից յուրաքանչյուրը պետք է գործադրի ամենայն ջանքեր անհաղթահարելի ուժի ազդեցությունը դադարեցնելու կամ մեղմելու համար, ներառյալ՝ երրորդ կողմերին ողջամիտ չափով գումարների վճարումը:

Մ Ա Ս 9
ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔԵՐ

Հոդված 9-1 Հատուկ դեպքերի ցանկ

1. Որևէ իրադարձություն՝ բերված ստորև, կհամարվի հատուկ դեպք;

ա) Կոնցեդենտի կողմից սույն Պայմանագրի խախտում, որը վերաբերում է Կոնցեսիոն ակտիվներին, շարժակազմին և հողատարածքներին՝ Կոնցեդենտի կողմից տրված երաշխիքների մասով

բ) Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն

գ) Կիրառվող օրենսդրության խախտում Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից

դ) ցանկացած պատահական կորուստ կամ վնաս հողատարածքներին, Կոնցեսիոն ակտիվներին

ե) էլեկտրոէներգիայի մատակարարման դադարում

2. Հատուկ դեպքեր չեն հանդիսանում այն դեպքերը, որոնք առաջացել են (ուղղակի կամ անուղղակի կերպով) Կոնցեսիոների կամ նրա ցանկացած կապալառուների գործողության կամ անգործության հետևանքով:

Հոդված 9-2 Հատուկ դեպքերի հետևանքները

1. Եթե հատուկ դեպքը՝

ա) հանդիսանում է օդանավակայանի օբյեկտների կառուցման և վերակառուցման կամ օդանավակայանային ծառայությունների մատուցման հետաձգման ուղղակի պատճառ,

բ) բացասական է ազդում Կոնցեսիոների կողմից համաձայն սույն Պայմանագրի իր ցանկացած պարտավորությունները կատարելու ունակության վրա

ապա այդ դեպքում Կոնցեսիոները կարող է դիմել Կոնցեդենտին սույն Պայմանագրի 4-5-րդ հոդվածից բխող՝ Կոնցեդենտի իրավունքների չկիրառման և սույն Պայմանագրի համաձայն Կոնցեսիոների պարտավորությունների կատարումը հետաձգելու խնդրանքով, ինչպես նաև առաջարկել Կոնցեդենտին փոփոխելու սույն Պայմանագրի պայմանները:

2. Եթե հատուկ դեպքը, որը նշված է սույն Պայմանագրի 9-1-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերում, բացառությամբ այն դեպքերի, երբ ավելանում է Կոնցեսիոների հարկային բեռը, հանդիսանում է Կոնցեսիոների կրած այս կամ այն վնասի, ծախսի և կորուստների ուղղակի պատճառ, ապա այդ դեպքում Կոնցեսիոները իրավունք ունի դիմել Կոնցեդենտին փոխհատուցում ստանալու պահանջով, համաձայն սույն Պայմանագրի:

3. Կոնցեսիոների ունեցած պարտավորությունների կատարման հետաձգում, փոխհատուցում ստանալու, Կոնցեդենտի՝ սույն Պայմանագրի 4-5-րդ հոդվածից բխող իրավունքների չկիրառման կամ սույն Պայմանագրի պայմանների փոփոխման առաջարկություն ներկայացնելու համար Կոնցեսիոները պարտավոր է՝

ա) հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ քան տաս (10) աշխատանքային օրվա ժամկետում՝ սկսված այն պահից, երբ Կոնցեսիոներին հայտնի է դառնում հատուկ դեպքի մասին, որը պատճառ է հանդիսացել Կոնցեսիոների վնասի, պարտավորությունների կատարման ուշացման և/կամ Կոնցեսիոների կողմից իր պարտավորությունների չկատարման համար,

հատուկ դեպքի մասին ծանուցում ուղարկել Կոնցեդենտին՝ ներառելով իր ունեցած ողջ տեղեկատվությունը հատուկ դեպքի բնույթի, ժամկետի, հնարավոր տևողության մասին (ծանուցում հատուկ դեպքի մասին)

բ) Կոնցեդենտին ներկայացնել խելամիտ հիմնավորում՝

1) որ դեպքը, որին հղում է կատարում Կոնցեսիոները, որակավորվում է որպես հատուկ դեպք համաձայն սույն Պայմանագրի

2) որ Կոնցեսիոները և նրա կապալառուները չեն կարողացել խուսափել տվյալ դեպքից կամ հանգամանքից և իրենցից ակնկալվող խելամիտ քայլեր են ձեռնարկել

3) որ Կոնցեսիոները ձեռնարկել է հնարավոր ամեն ինչ՝ կատարելու իր պարտավորությունները համաձայն սույն Պայմանագրի

4) հատուկ դեպքի պահին Կոնցեսիոների պարտավորությունները և պարտավորությունների հետաձգման տևողությունը, եթե Կոնցեսիոները խնդրում է պարտավորությունների կատարման հետաձգում,

5) ծախսերի գումարը՝ կապված վնասի հետ, որոնք պետք է փոխհատուցվեն այն դեպքում, երբ Կոնցեսիոները խնդրում է փոխհատուցում;

4. Այն դեպքում, երբ Կոնցեսիոները կատարել է իր պարտավորությունները սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, իսկ Կոնցեդենտը ընդունել է, որ տեղի է ունեցել հատուկ դեպք, ապա՝

ա) Կոնցեսիոները չի կրում պատասխանատվություն իր պարտավորությունները չկատարելու համար պարտավորությունների հետաձգման ընթացքում

բ) Կոնցեդենտը չի լուծում սույն Պայմանագիրը սույն Պայմանագրի 10-րդ մասի համաձայն;

գ) եթե Կոնցեսիոները պահանջել է փոխհատուցում, և Կոնցեդենտը ընդունել է նման պահանջի հիմնավորվածությունը, ապա Կոնցեդենտը պետք է վճարի այդպիսի փոխհատուցումը՝ ծանուցումը ներկայացնելուց հետո հարյուրքսան (120) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կողմերի միջև այլ բան համաձայնեցված չէ:

5. Կոնցեսիոները պարտավոր է ծանուցել Կոնցեդենտին, եթե նա ցանկացած ժամանակ ցանկացած լրացուցիչ տեղեկություն է ստանում հատուկ դեպքի հետ կապված, ծանուցման մեջ նշելով այդ տեղեկատվության մասին մանրամասն տվյալներ, եթե այդ տեղեկությունը նոր է, կամ էլ հայտնում է, որ նախկին տեղեկությունը պարունակել է սխալներ կամ եղել է ոչ ճշգրիտ:

6. Եթե Կողմերը չեն համաձայնվում սույն Պայմանագրի 4-5-րդ հոդվածից բխող իրավունքների չկիրառման, Կոնցեսիոների պարտավորությունների կատարումը հետաձգելու, սույն Պայմանագրի պայմանները վերանայելու, փոխհատուցման վերաբերյալ կամ Կոնցեդենտը չի համաձայնվում, որ տեղի է ունեցել հատուկ դեպք, ապա Կողմերը լուծում են հարցը համաձայն սույն Պայմանագրի 11-րդ մասի:

Մ Ա Ս 10
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ

Հոդված 10-1. Սույն Պայմանագրի լուծման դեպքերը

Կողմերը սույնով համաձայնում են, որ բացի սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից, սույն Պայմանագիրը կարող է ցանկացած պահի լուծվել մինչև սույն Պայմանագրի գործողության ավարտը.

ա) ծանուցման միջոցով՝ Կողմերից որևէ մեկի կողմից պարտավորությունների չկատարման կամ խախտման հիման վրա՝ համաձայն սույն Պայմանագրի 10-4 և 10-5 հոդվածների;

բ) սույն Պայմանագրի 10-9 հոդվածին համապատասխան՝ անհաղթահարելի ուժի հանգամանքների հետևանքով,

գ) Կողմերի միջև համաձայնությամբ՝ սույն Պայմանագրի 10-10 հոդվածին համապատասխան:

Հոդված 10-2. Սույն Պայմանագրի լուծման հետևանքները

Եթե սույն Պայմանագիրը լուծվում է սույն Պայմանագրի 10-1 հոդվածում նախատեսված հիմքերով, ներառյալ սույն Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը, ապա.

ա) Կոնցեսիոները պետք է ոչ ուշ քան երեսուն (30) աշխատանքային օր առաջ Պայմանագրի լուծման օրվանից Կոնցեդենտին հանձնի Կոնցեսիոն ակտիվները;

բ) յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմին վճարում է սույն Պայմանագրին համաձայն վճարման ենթակա բոլոր գումարները, ընդ որում այդպիսի վճարումը պետք է իրականացվի սույն Պայմանագրի լուծման օրվանից ոչ ուշ քան վաթսուն (60) աշխատանքային օրվա ընթացքում;

գ) Կոնցեսիոները Կոնցեդենտին փոխանցում է իր բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ երրորդ անձանց հետ գործող Պայմանագրերի և համաձայնագրերի շրջանակներում, որքանով որ դրանք կնքվել են Կոնցեսիոների կողմից վերջինիս իրավունքներն իրացնելու և սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Կոնցեսիոների ստանձնած պարտավորությունները ակնհայտորեն անհամաչափ և անհամատեղելի են Կոնցեսիոն ակտիվների ընթացիկ շահագործման հետ, ինչպես նաև, բացառությամբ սույն Պայմանագրի գործողության ընթացքում Կոնցեսիոների կողմից չկատարված հարկային պարտավորությունների:

Հոդված 10-3. Ծառայությունների և շահագործման անընդհատություն

Սույն Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Կողմերը շարունակում են կատարել իրենց Պայմանագրային պարտավորությունները, ինչպես նաև ցանկացած այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են ապահովելու օդանավակայանային ծառայությունների անխափան և շարունակական մատուցումը, պայմանով, որ Կոնցեսիոները ազատվում է պարտավորություններից սույն Պայմանագրի լուծման օրվանից երեսուն (30) աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 10-4. Պայմանագրի չկատարում հանդիսացող հանգամանքները

Եթե սույն Պայմանագրով այլ բան չի նախատեսվում,

ա) Որևէ Կողմի՝ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ցանկացած չկատարումը հանդիսանում է Պպայմանագրի չկատարման դեպք

բ) սույն Պայմանագիրը չկատարած Կողմը պետք է փոխհատուցի մյուս Կողմին վերջինիս կողմից փաստացի կրած վնասները, որքանով որ այդ վնասները հանդիսանում են Պայմանագրի չկատարման դեպքի ուղղակի արդյունք, բացառելով կորած շահույթը, անուղղակի կամ հետևանքային վնասները:

Հոդված 10-5. Պարտավորությունների խախտում հանդիսացող հանգամանքները

Հետևյալ դեպքերը հանդիսանում են պարտավորությունների խախտում.

1. Կոնցեդենտի կողմից, եթե՝

ա) Կոնցեդենտը իրականացնում է որևէ գործողություն, որն էապես խախտում է Կոնցեսիոների կողմից օդանավակայանի շահագործումը կամ օդանավակայանային ծառայությունների մատուցումը կամ էական ֆինանսական վնաս է հասցնում Կոնցեսիոներին

բ) Կոնցեդենտը չի կատարում սույն Պայմանագրի 7-3-րդ հոդվածում նշած պարտականությունները:

2. Կոնցեսիոների կողմից, եթե՝

ա) Կոնցեսիոները լիովին կամ էապես դադարեցնում է օդանավակայանի շահագործումը կամ օդանավակայանային ծառայությունները երեսուն (30)] կամ ավելի օրվա ընթացքում;

բ) Կոնցեսիոները անվճարունակ կամ սնանկ է հայտարարվում;

գ) Կոնցեսիոները փոխանցում է սույն Պայմանագիրն առանց Կոնցեդենտի նախնական համաձայնության:

Հոդված 10-6. Պարտավորությունների խախտման բացակայություն

Սույն Պայմանագրի 10-5 հոդվածում նշված հանգամանքները չեն համարվում պարտավորությունների խախտում, եթե այդ հանգամանքները անհաղթահարելի ուժի ազդեցության կամ հատուկ դեպքի հետևանք են:

Հոդված 10-7. Ընթացակարգը պարտավորությունների խախտման դեպքերում

1. Եթե Կողմերից մեկը հիմնավոր կերպով գտնում է, որ տեղի է ունեցել կամ շարունակվում է տեղի ունենալ պարտավորությունների խախտում, տվյալ Կողմը պետք է ծանուցում ներկայացնի պարտավորությունները խախտող կողմին, նշելով.

ա) պարտավորությունների խախտման դեպքի բնույթը;

բ) այն քայլերը, որոնք ողջամտորեն պահանջվում են պարտավորությունների խախտումը վերացնելու համար;

գ) ողջամիտ ժամկետ, ոչ պակաս քան երեք (3) աշխատանքային օր, որի ընթացքում պարտավորությունների խախտման դեպքը պետք է վերացվի:

2. Պարտավորությունների խախտման դեպքի հետևանքով տուժած Կողմը կարող է, ցանկացած պահին, մինչև պարտավորությունների խախտման դեպքի վերացնելու ժամկետի ավարտը, ետ վերցնել իր ծանուցումը, եթե հիմնավոր կերպով գտնում է, որ խախտող Կողմը շտկել է համապատասխան պարտավորությունների խախտման դեպքը:

3. Եթե պարտավորությունները խախտող Կողմը չի շտկում խախտման դեպքը այդ մասին ծանուցման մեջ նշված ժամանակահատվածում, ծանուցող Կողմը կարող է, դրանից հետո ցանկացած պահին սույն Պայմանագրի լուծման մասին ծանուցում ներկայացնել խախտող Կողմին՝ նշելով սույն Պայմանագրի լուծման օրն ու ժամը:

4. Կողմերը պետք է շարունակեն կատարել սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները, մինչև պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ նշված օրն ու ժամը:

Հոդված 10-8 Պարտավորությունների խախտման արդյունքում պայմանագրի լուծման հետևանքները

1. Եթե Կոնցեդենտը լուծում է սույն պայմանագիրը Կոնցեսիոների կողմից պարտավորությունների խախտման հիմքով.

ա) Կոնցեդենտն իրավասու է պահանջել Կոնցեսիոներից փոխհատուցում՝ օդանավակայանի 6 ամսվա անխափան շահագործման համար պահանջվող գումարի չափով

բ) Կոնցեդենտը իրավունք է ստանում ձեռք բերել Կոնցեսիոների սեփականություն հանդիսացող շարժական գույքը, վճարելով Կոնցեսիոներին դրա մնացորդային գինը՝ հաշվարկված անկախ գնահատողի կողմից Կիրառվող օրենսդրության համաձայն:

գ) Կոնցեդենտը վճարում է Կոնցեսիոներին ենթակառուցվածքներում փաստացի կատարված ներդրումների հանրագումարի և մինչև սույն պայմանագրի լուծման ամսաթիվը ստացված շահույթի հանրագումարի տարբերության հիսուն (50) տոկոսը՝ հաստատված անկախ աուդիտի կողմից:

դ) Կոնցեդենտն իրավունք ունի օգտագործելու Կոնցեսիոն ակտիվները անհապաղ՝ սույն Պայմանագրի լուծման ամսաթվից հետո նախքան Կոնցեսիոներին վճարվելիք գումարը վճարելը:

2. Եթե սույն Պայմանագիրը լուծվում է Կոնցեդենտի նախաձեռնությամբ սույն հոդվածի 1-ին կետով չնախատեսված հիմքով, Կոնցեդենտը վճարում է Կոնցեսիոներին սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նպատակով Կոնցեսիոների կողմից ենթակառուցվածքներում փաստացի կատարված ներդրումների հանրագումարի և մինչև սույն Պայմանագրի լուծման ամսաթիվը ստացված շահույթի

հանրագումարի տարբերությունը, պայմանով, եթե Կոնցեսիոները կատարել է սույն Պայմանագրով նախատեսված իր բոլոր պարտավորությունները:

3. Եթե Կոնցեսիոները լուծում է սույն Պայմանագիրը Կոնցեդենտի պարտավորությունների խախտման հիմքով, Կոնցեսիոները կարող է որպես փոխհատուցում պահանջել Կոնցեդենտից՝

ա) հիմնավորված ծախսերը և վնասները, որոնք առաջացել են սույն Պայմանագրի վաղաժամկետ լուծման արդյունքում, բացառելով կորած շահույթը, անուղղակի կամ հետևանքային վնասները:

բ) սույն Պայմանագրի լուծման օրվան նախորդող երեք (3) տարվա Կոնցեսիոների շահույթի հանրագումարը կամ ամբողջ կոնցեսիոն ժամանակահատվածի համար միջին տարեկան շահույթի եռակի գումարը, եթե Պայմանագիրը լուծվում է Կոնցեսիոն գործունեության մեկնարկի օրվանից երեք (3) տարվանից շուտ:

գ) սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նպատակով Կոնցեսիոների կողմից ենթակառուցվածքներում փաստացի կատարված ներդրումների հանրագումարի և մինչև սույն Պայմանագրի լուծման ամսաթիվը ստացված շահույթի հանրագումարի տարբերությունը:

դ) Կոնցեդենտը ձեռք է բերում Կոնցեսիոների սեփականություն հանդիսացող շարժական գույքը, վճարելով Կոնցեսիոներին շարժակազմի մնացորդային գինը՝ հաշվարկված անկախ գնահատողի կողմից՝ Կիրառվող օրենսդրության համաձայն:

Հոդված 10-9. Պայմանագրի լուծում անհաղթահարելի ուժի հետևանքով

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է վեց (6) ամսվանից ավել, անհաղթահարելի ուժի ազդեցության տակ հայտնված կողմն իրավունք ունի միակողմանի կարգով լուծել սույն Պայմանագիրը:

Հոդված 10-10. Պայմանագրի լուծում փոխադարձ համաձայնությամբ

Կողմերը կարող են ցանկացած պահին լուծել սույն Պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ՝ կնքելով համապատասխան համաձայնագիր: Փոխադարձ համաձայնությամբ վաղաժամկետ լուծման հստակ հետևանքները սահմանվում են կողմերի հայեցողությամբ:

Մ Ա Ս 11
ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 11-1. Վեճերի լուծումը փոխադարձ համաձայնությամբ

1. Կոնցեդենտը և Կոնցեսիոները սույնով համաձայնում են ջանքեր գործադրել՝ իրենց միջև ծագած ցանկացած վեճ փոխադարձ համաձայնությամբ լուծելու համար:

2. Եթե Կողմերից որևէ մեկը ենթադրում է, որ Կողմերի միջև վեճ է առաջացել, ապա այդ Կողմը իրավունք ունի մյուս Կողմին վեճի առաջացման մասին ծանուցում ուղարկել՝ նշելով վեճի էությունը և դրա կարգավորման հետ կապված առաջարկությունները (այսուհետ՝ վեճի առաջացման մասին ծանուցում):

3. Կողմերը պարտավոր են բանակցություններ վարել և գործադրել բոլոր խելամիտ միջոցները վեճ առաջանալու մասին ծանուցումը ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում, եթե Կողմերը գրավոր ձևով այլ ժամկետի մասին չեն պայմանավորվել, վեճը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար:

4. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում, Կողմը, որը վեճի առաջացման մասին ծանուցմամբ հայտնել է վեճի գոյության մասին, մյուս Կողմին է ուղարկում գրավոր պահանջ, որին մյուս Կողմը պետք է ներկայացնի գրավոր պատասխան՝ վերջինս ստանալու ամսաթվից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

5. Այն դեպքում, եթե Կողմը ենթադրում է, որ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան մյուս Կողմի պատասխանում իր պահանջն ամբողջությամբ կամ մասամբ բավարարված չէ կամ, եթե գրավոր պահանջի վերաբերյալ պատասխան չի ներկայացվել, ապա նշված Կողմը իրավունք ունի վեճի լուծումը հանձնել դատարանի քննությանը՝ Կիրառվող օրենսդրության համաձայն:

Հոդված 11-2. Իրավունքների և պարտավորությունների պահպանում

Սույն հոդվածով նախատեսված ոչ մի վեճ կամ դրա կարգավորում չի կասեցնում սույն Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները:

Հոդված 11-3. Կիրառվող օրենսդրություն

Սույն Պայմանագրի մեկնաբանությունը և դրա կապակցությամբ ծագող որևէ վեճ ենթակա է կարգավորման Կիրառվող օրենսդրության համաձայն:

Մ Ա Ս 12
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12-1. Փոփոխություններ և լրացումներ

Կողմերը կարող են ժամանակ առ ժամանակ գրավոր համաձայնության գալ՝ սույն Պայմանագրի ցանկացած դրույթ, այդ թվում՝ նաև նշված ցանկացած ժամկետ լրացնելու, փոխարինելու, անվավեր համարելու կամ փոփոխելու վերաբերյալ:

Հոդված 12-2. Հրաժարում

Սույն Պայմանագրի որևէ դրույթի չկիրարկումը Կողմերից մեկի կողմից որևէ կերպ չի նշանակում այդ դրույթներից հրաժարում կամ Կողմի՝ հետագայում ցանկացած ժամանակ այդ դրույթները կիրարկելու իրավունքից հրաժարում:

Հոդված 12-3. Մասնակի անվավերացում

Եթե Կիրառվող օրենսդրությամբ, դատարանի վճռով կամ իրավասու պետական մարմնի որոշմամբ սույն Պայմանագրի որևէ դրույթ դառնում է անվավեր, այդ դրույթը չի կիրառվում և սույն Պայմանագրի մնացած մասը պետք է մնա Կողմերի համար պարտադիր և կիրարկելի:

Հոդված 12-4. Հետագա գործողություններ

Կողմերը պետք է իրենց լիազորությունների սահմաններում կազմեն բոլոր այն փաստաթղթերը և իրականացնեն բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են սույն Պայմանագրին լիակատար իրավական ուժ տալու համար:

Հոդված 12-5. Փոխանցման արգելում

Կոնցեսիոները իրավասու չէ սույն Պայմանագիրը կամ դրանով նախատեսված իր իրավունքներն ու պարտավորությունները փոխանցել մեկ այլ անձի, առանց Կոնցեդենտի նախնական գրավոր համաձայնության:

Հոդված 12-6. Ամբողջական պայմանագիր

Սույն Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև ամբողջական պայմանագիր՝ դրա առարկայի վերաբերյալ և փոխարինում է սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ բոլոր նախորդ և ներկա գրավոր և բանավոր պայմանագրերը, համաձայնագրերը և բանակցությունները:

Հոդված 12-7. Ներկայացչություն

Բացառությամբ այն դեպքերի, որոնք գրավոր թույլատրված են Կոնցեդենտի կողմից, Կոնցեսիոները չի կարող ներկայանալ որպես Կոնցեդենտի ծառայող կամ ներկայացուցիչ, կամ հավաստել, որ իրավունք ունի վերջինիս անունից որևէ փաստաթուղթ ստորագրել:

Հոդված 12-8. Համաձայնեցումներ

1. Եթե այլ բան նախատեսված չի սույն Պայմանագրով և Կիրառվող օրենսդրությամբ, սույն Պայմանագրով նախատեսված Կոնցեդենտի հետ համաձայնեցումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

ա) Կոնցեսիոներն իր առաջարկությունը գրավոր ձևով ներկայացնում է Կոնցեդենտին:

բ) Կոնցեդենտիը երեսուն (30) աշխատանքային օրվա ժամկետում քննարկում է Կոնցեսիոների առաջարկությունը և նրա հետ լրացուցիչ քննարկումների ու բանակցությունների անհրաժեշտության բացակայության դեպքում գրավոր ներկայացնում է Կոնցեսիոներին իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը:

գ) Եթե նշված երեսուն (30) աշխատանքային օրվա ժամկետում Կոնցեդենտի կողմից որևէ պատասխան չի տրվում Կոնցեսիոներին, ապա համաձայնեցումը համարվում է տրված

2. Կոնցեսիոների կողմից ներկայացված առաջարկության վերաբերյալ լրացուցիչ քննարկումների ու բանակցությունների անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված երեսուն (30) աշխատանքային օրյա ժամկետը Կոնցեդենտը կարող է երկարաձգել տասնհինգ (15) աշխատանքային օրով՝ տեղեկացնելով այդ մասին Կոնցեսիոներին:

Հոդված 12-9. Վճարման տարադրամը և հաշվարկների կարգը

1. Սույն Պայմանագրի համաձայն բոլոր հաշվարկները իրականացվում են ՀՀ դրամով:

2. Եթե սույն Պայմանագրով որևէ կողմին պետք է կատարվի վճարում և, եթե սույն Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, այդ վճարումը կատարվում է առանձին հաշվի հիման վրա, որը կողմը ներկայացնում է վճարողի հասցեով, և ենթակա է կատարման հաշիվը ստանալու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան վաթսուն (60) աշխատանքային օրվա ընթացքում:

Հոդված 12-10. Պայմանագրի լեզուն և մեկնաբանությունները

Սույն Պայմանագիրը կնքվում է երեք (3) իսկական օրինակից՝ հայերեն:

Հոդված 12-11. Ծանուցումներ

1. Սույն Պայմանագրի շրջանակներում կատարվող որևէ ծանուցում կամ այլ հաղորդում պետք է արվի գրավոր, տրվի առձեռն, կամ ուղարկվի փոստով կամ հեռապատճենի միջոցով կողմերի՝ ստորև նշված հասցեով կամ այլ հասցեով /այդ թվում՝ էլեկտրոնային հասցեով/ կամ համարով, որն այդ նպատակով ծանուցվող կողմը կարող է ընտրել՝ նախապես ծանուցելով մյուս կողմերին.